

148439

1916 № 2/13

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԺԱՄԱՐԵԱՆԻ № 1.



Ա. ՎԱՐԴԻԿԵՑՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ի Հ Ա Յ Ա Տ Ա
Ի Ն Ս Պ Ի Ւ Տ Ա
Բ Ո Յ Ո Խ Ե Ճ Ե Խ
Ա կ ա դ օ ն ս ի ն ս
С С Р

ՅԵՐԱՍԻՇՎԻԼԻ

ՄԱՅ

ԳԻՆ Է 10 ԿՈՊ.

○○○○○○○○



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Ն. Աղամեսի, Պոլից. 7

1915

891-99

Կ-30

6 NOV 2011

883

6148

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԺԱՇԱՐԵՄՆԻ № 1.

891-99

4-30

Մ. ՎԱՐԴԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻНՍԻՏՈՒՏԱ
ԲՈՅՈԿՈՎԵԴԻՈ
Ակադեմիա Խառ
ՍՍՀ

ՀԵՐՈՍԱԿԱՆ

ՄԱՅ




•••••••••

ԹԻՖԼԻԶ

Ցպարտան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1915



109/AUG 2013

57344



Դեռ այս դի խնմարքը բայց ու այս պահը
ու այս տարբերակը ու այս գույքը ու այս
այս բանը ճշգրտած է այսպիսուն պահը
ու այս պահը պահանջուն պահը ու այս
պահը պահանջուն պահը լուսավոր ու

Դեռ ևս Աղամայ մութն էր: Լուսոյ բարակ
քօղը նոր էր հազել բնութիւնը և հազիւ նշմա-
րելի էին լինում հեռուում լեռներ ու անտառ-
ներ, բայց պարզ նկատելի էր լինում իրար վը-
րայ գիղւող կրակների բոցը, որ երբեմն թանձր
ծուխի միջից յանկարծ բարձրանում էր և իջ-
նում: Տիւղը արդէն ծածկւած էր մոխրա-
կոյտի տակ, նրա որդոց մեծ մասը զոհ էր գը-
նացել թշնամու սրին, իսկ միւս մասը՝ լեռներ
ապահինած մի խումբ գիւղացիների հետ, իւ-
րեանց վերջին գոյութիւնն էին պաշտպանում:
Քաջերի թիւը համարում էր մօտաւորապէս 200
հոգու: Դրանք ամրացել էին բնութիւնից բա-
ւականին լաւ պաշտպանւած բարձրավանդակի
վրայ:

Բագօն, որ այդ քաջախմբի գիշերապահնն
էր, դարատափից աչքերը դէպի այն կողմ դար-
ձրած՝ աչալըջութեամբ հետեւում էր ամեն մի
ձայնի, ամեն մի խուլ շնչոցի. նա երբեմն
հրացանը ուսին գցած անց ու դարձ էր անում,
իսկ երբեմն էլ կանգնում, յենուում հրացանի



56223 - 66

կոթի վրայ ու պինդ սեղմելով իւր խիտ կոպերը՝ կենարոնացնում էր հեռւում շարժւող մի ինչոր կէտի վրայ ու դարձեալ անց ու դարձը շարունակում։ Յանկարծ կանդ առաւնա ու մի ծանր ախ գուրս թռաւ նրա սրտից, նա բռունցքով պինդ շփում էր ճակատը, նրա աչքի առաջ կարծես նորից պատկերանում էր այն սարսափելի հրդեհը, որը իսլամի դաժան զաւակները ձգել էին իւր հայրենի օջախը։ Նա կարծես տեսնում էր, թէ ինչպէս թաւալգլոր մարդոց ու կանանց դիակները լողում են աշրեան լճերի մէջ, այս, նա տեսնում էր իւր հոգու աչքերով ու սոսկում։

Նա լուռ ու մունջ կանգնած, կարծես արձան էր կտրւել, նա տեսնում էր, թէ ինչպէս քիւրդը շամփրում էր իւր նիզակը թշւառ ծերունու կուրծքը, գլուխը կտրում ու նիզակի վրայ հազցրած՝ պարծենում էր իւր քաջութեան վրայ, իսկ միւս կողմը՝ մի այլ գազան տաճիկ զինւոր՝ խլում էր մօր ձեռքից երեխան, ձգում էր գէպի վեր ու սրի մի հարւածով կիսում էր իւր թշւառ զոհին, նա տեսնում էր բարբարոսների այն լկտի վարմունքը, որով պղծում ու անպատւում էին իրենց կոյս աղջկերքը և վերջապէս՝ նա տեսնում էր, թէ ինչպէս կրակը լափում էր հայ քրտինքով խնայած օջախը, նրա սիրտը կտոր-կտոր էր լինում,

կատաղի վրէժինդրութեան կրակը փայլում էր աչքերում, նա սաստիկ ծեծում էր բռունցքով իւր կուրծքը և կատաղի կծում էր իւր բռութմատը ու բերանից գուրս էին թռչում անկապ բառեր։

— Ո՞հ, այդ քեզ չի մնալ, բիրտ կենդանի, կը դայ մի օր և որը աւելի սոսկալի պէտք է լինի քեզ համար. խնդացէք, դժոխային զաւակներ, խնդացէք, արիւնի ու արտասուքի վրայ հիմնած գահը արիւնով էլ պիտի կործանւի և հեռու չէ այդ օրահաս ժամը։

Նա այս ասաց ու յանկարծ մի ձայն խլեց նրա ուշադրութիւնը. նա խոնարհւեց դէպի գետին ու ականջ դրեց, լսելի էր լինում ձիաների ստների խուլ տրոփ, նա վեր թռաւ տեղից ու մօտեցաւ իւր նիրհող ընկերներից մէկին։

— Սրգն, վեր կաց, կարծես թշնամին մօտ է մեզ, — այս ասաց ու ինքը թռաւ իւր պահակատեղին ու ուշադրութեամբ սկսեց հետազոտել թշնամու ամեն մի շարժումը։

Սրգոն շտապով վեր թռաւ տեղից ու մօտ վազեց Բագոյին։

— Ո՞րտեղ են այդ նզովեալները, — ասաց նա անհամբերութեամբ։

— Տես, ահա, այնտեղ, — նշան արաւ Բագոն։

— Ի՞նչ սարսափելի ծուխ է այնտեղ, ոհ,
կորաւ մեր հայրենի օջախը... Բաղօ, տես,
այնտեղ ինչ որ սեին է տալիս, կարծես թէ
թշնամին պիտի լինի, — ասաց ցածր ձայնով
Սրգոն:

— Այո, նրանք են, ասաց Բաղօն:

— Ել հարկաւոր չէ ժամանակ կորցնել,
մեր անելիքը պիտի անենք, ձայն տուր տղե-
րանց, թող վեր կենան, ել քնելու ժամանակ չէ,
դուցէ մեզ յաւիտենական քուն է սպասում:

Բաղօն շտապով թռաւ դէպի իւր ընկեր-
ները և ձայն տւեց, նոցանից մի քանիսը կի-
սաքուն, շփոթւած վեր ցատկեցին տեղից ու
անհամբեր իրար հարցնում էին.

— Ի՞նչ կայ.

— Ո՞րտեղ են.

— Բան կայ.

— Թշնամին է:

— Այո, թշնամին հեռու չէ մեզանից,
պատրաստեցէք, — ասաց ու ինքը թռաւ դէպի
Սրգոն:

Տղերքը շուտով կրակը մարեցին ու կարգի
բերին իրանց բանակատեղին:

Քաջերի խումբը 200-ից դէնը չէր անցնում,
կային դրանց մէջ նաև 20—30 կանայք ու
ծծկեր երեխայք: Խմբի առաջնորդն էր Յարօն,
մի խելացի և կտրիչ տղամարդ. նա երեսուն

ու հինգ տարին լրացրած մարդ էր, բայց իւր
կեանքում այնքան փոթորիկների էր պատա-
հել, որ ժամանակից առաջ ծերացել էր ու ա-
կօներ ընկել երեսի վրայ:

Յարօն, հազիւ թէ մի քանի ժամ իւր ըն-
կերների հետ քուն էր մտել. կոշտ ու կոպիտ
հողը կազմում էր նրանց անկողինը, իսկ վեր-
մակնելը, նրանց հագի շորեցը. բայց հայ քա-
ջերի համար դա սովորական կեանք է. միթէ
նրանք քնած էին, միթէ հերոսների համար
հանգիստ քուն կայ, քանի որ ամեն մի ըոպէ
թշնամին նրանց մահ է սպառնում. կարիքը,
սակայն, ննարաւոր էր դարձրել նրանց ամեն
արգելքի դիմանալուն:

Յարօն քնած չէր, նրա գլխի մէջ պտտում
էին հազար ու մի սկ երազներ, նրա առաջ
ներկայանում էր հայրենիքին սպառնացող վը-
տանզը, նա տեսնում էր այն սարսափելի վի-
ճը, որը պատրաստել էր հայութեան երգւեալ
թշնամին, նրա սրտից արիւն էր կաթում, նա
անիծում էր ինքն իրան, որ կենդանի էր ֆնա-
ցել, իսկ իւր սիրելիները զոհ էին գնացել: Նո-
րա սիրաը մի ինչ որ գաղտնիք որոճում էր և
ինչպէս գինովցած մարդ՝ խարխափում էր քնի
մէջ ու խօսում.

— Սա մեր օրհասական կոիւն է... Բայց
պէտք է ազատւի Հայաստան...

— Այո, կազատւի, — լսուեցան ինչ որ խոռվ ձայներ:

— Յարօն չի վախենում, նա պիտի լուծի իւր վրէժը, թող ես էլ մեռնեմ իմ անմահ ընկերներիս հետ միասին և այնտեղ հանգստացնեմ իմ կեանքս...

— Հայաստանը պէտք է ազատւի... լսւեցին նորից խորհրդաւոր ձայներ:

— Մեր դատը սկսւել է, բարձրացած է ազատութեան դրօշակը, գերեալ ու նախատւած ժողովուրդը իր իրաւունքներն է պահանջում, նրա որդիքը պատրաստ են հազարաւոր զոհեր տալու, այդ սրբազան գաղափարը իրագործելու համար:

— Հայաստանը պէտք է ազատւի... լսւեցին նորից աւելի պարզ և ուժեղ ձայներ:

— Ինչ սրբազան ձայն է այդ: — Նա աչքերը տրորեց, ծունկ ելաւ ու սկսեց դէպի երկինք նայել:

— Յարօ, վեր կաց, վտանգը մօտ է, — ասաց ցածր ձայնով Բաղօն:

— Յարօն վեր թռաւ տեղից՝ ուրախութեան ժպիտը երեսին.

- Լսեցիր, Բաղօ... (գրկելով Բաղօին).

— Ի՞նչ...

— Հայաստանը պէտք է ազատւի...

— Ո՞րտեղից... զարմացած հարցըրեց Բագոն:

— Ահա, այստեղ, այս նւիրական տեղում...

— Ինչ ես խօսում... ուրախութեան ժպիտը փայլեց երեսին:

— Երդւում եմ, որ երազ չէր, — ասաց ոգեւորւած Յարօն ու սկսեց նայել երկնքին:

— Ոհ, երանի թէ վերջ լինէր այս տանջանքներին: Գնանք, Յարօ, թշնամին հեռու չէմեզանից:

— Ո՞ւր է, ուր նա, ոհ, ես արեան ծարաւեմ զգում, ասաց նա ձեռքը տանելով սրին:

— Ահա, դիմացի լեռնադաշտի վրայ, ու ցոյց տուեց մատով:

— Ո՞հ, որքան ուրախ եմ, որ իմ կեանքս էլ պիտի միացնեմ իմ անմահ ընկերներիս հետ... Ո՞հ, դրանից մեծ երջանկութիւն չի սպասում Յարօյին: Ահ, Բաղօ, ինչ զոհ կարող ենք բերել հայրենեաց սուրբ սեղանին, որ մարդս հասնի ամենամեծ երկրաւոր փառքին, քան հայրենեաց ազատութեան, որ մենք վստահանում ենք մեր կեանքով, բայց այս քիչ է, ինչ որ չզոհէինք այս վճռական մօմենտին, դարձեալ ամենափոքը կը լինէր այս նւիրական գործի համար. մեզպէս հազարաւորներ են նահատակւել ու քաջաբար կուել ու մեռել, թող մենք էլ որպէս արժանաւոր հետևողներ բաց կուրծքով

դէմ կենանք թշնամուն։ Այս ասաց և ուրախութեան նշոյլը փայլեց աչքերում։

— Այն, սիրելի Յարօ, մեծ գործերը մեծ զոհաբերութիւններ են պահանջում, եթէ մեր բաղդին է ընկել՝ այդ մենք պիտի չխնայենք, քանի որ տեսնում ենք՝ թէ մեր կեանքի հորիզոնի վրայ ինչպիսի լուսատու յոյս է վառւում, ոհ, ինչ երջանկութիւն... ասաց ու պինդ սեղմեց նրան իւր բազուկների մէջ ու սկսեց համբուրել։

Այդ ժամանակ մօտ վազեց Սրգոն։

— Հա, ի՞նչ կայ, արդեօք հեռնե է մեզանից թշնամին, ասաց ժպտալով Կարօն։

— Կարծեմ 2—3 ժամւայ ճանապարհ կլինի, ասաց տիսուր ձայնով Սրգոն։

— Ուրեմն մի քանի ժամ ևս կեանք ունենք։ Այս, երանի թէ մի բոպէ լինէր, — ժպտալով ասաց Յարօն։

Քաջերի խումբը արդէն պատրաստ էր, նրանք ամեն միջոց ձեռք առան ամրացնելու իւրեանց դիրքը, տենդային արագութեամբ ահազին հողաբլուրներ կազմեցին ու խրամատներ շինեցին իւրեանց համար ու ամենքը տեղաւորւեցան պատի երկայնութեամբ։

Յարօն մօտեցաւ խմբին ու այս համաօտակի խօսքերն ասաց։

— Տղերք, ես ձեզ մատադ, լսեցէք իմ

վերջին խօսքերս, լսեցէք, ասաց նա բարձրաձայն, ալեկոծւած ու դոդոջուն ձայնով։ — Լցւել է հայի համբերութեան բաժակը, «ըլ՝ հինգ հարիւր տարի անտրտունջ տանում էր ամեն անարգանք։ Խոլամի լուծը՝ իբրև մի ժայռ ծանրացած է մեր վզին։ Մեր ազգի, մեր ընտանիքի պատիւր ոտի տակ է գնացած, պըղծւած ու աւերւած է ամեն մի սրբութիւն։ Հետևապէս, իւրաքանչիւրը մեզանից, ում մէջ սիրտ կայ ու սիրում է հայրենի հողը, իւրաքանչիւր նախանձախնդիր հայ՝ իւր հայրենիքի պատւարժան անւան ու Նրա գոյութեան համար պէտք է դէն ձգի անձնական շահերը, գալ ու կանգնելու է ազատութեան սուրբ գրօշակի տակ։

Վւելի լաւ է մեռնել՝ քան թէ մշտական ապրել ամօթով ու ցածութեամբ։

Աղօթքներս առ բարձրեալն ուղղած, յոյս ունենք նա կլինի մեր զօրավիզը և մենք մեր հաստատուն կամքով դէմ կդնենք մեր արիւնարբութշնամուն գործի ճշմարտութեան համար։

Ամեն մի հայի սրտում վառւում է յոյսը՝ ձեռք բերելու հայրենիքի ազատութիւնը։ Ահա ներկայ պայմաններից է կախւած մեր հայրենիքի ապագան, իւրաքանչիւրը, որ իրան տղամարդ է անւանում, պէտք է մասնակցի այս սուրբ գործին։ Ով անհոգութեամբ կվարւի՝ նա անպիտան ու վատ հոգի է և արժանի է արհա-

մարհանքի, ով անպատւաբեր կեանքը բարձր է դասում պատւառը մահից, նա ստուկ է ու փոքրոգի: Տղերք, վերջին համբոյրը տանք մեր հայրենի հողին, թող դա լինի մեր սուրբ ուխտի գրաւականը:

Ամենքը համբուրեցին հողը, շատերի աչքերում յորդառատ արցունքը ցոլաց: Տեսարանը շատ սրտաշարժ էր: Ապա չոքեցին բոլորեքեան ու միասին երգեցին:

Ով Տէր Աստւած լուր մեր բարբառ

Ուղղեա սրտեր միշտ վշտահար
Փութա գըթա հայոց թշւառ

Մի յօտարաց լցին աւար:

Այդ ժամանակ արդէն արշալոյսը բացւում էր ու արկի շողողուն ճառագայթները սկսել էին տարածւել ամեն կողմ և որոնք ընկան նոյնպէս հերոսների արևակէզ դէմքերին:

Աղօթքը վերջացնելով, վերկացան տեղից ամենքի երեսին փայլում էր մի անվեհերութիւն, ամենքի սիրտը լցւել էր անվերջ բերկութեամբ և ուրախութեամբ:

Թշնամու գունդերը արդէն մօտ էին, չամիդիէներն իւրեանց ժանիքները սրած՝ անողոք մահ էին սպառնում ամենուրեք. նրանք գաղանային հոտառութեամբ իմացել էին հայ քաջերի տեղը, փաշայի հրամանով ամենքը դէպի այն կողմ էին շտապում: Անցաւ կէս օրը՝ հրո-

սակների խմբերը բոնել էին չորս կողմի բարձրութիւնները, զօրքի մի մասը համիդիէների առաջապահութեամբ զանազան ճանապարհներ անցնելով հայ քաջերի մուտքերն էին փակել:

Որոտացին ամեն կողմից թնդանօթներն ու նրանց կործանիչ գնդակները ցըիւ տւին հողակոյտի մի մասը, բայց հայոց քաջերին չէր հասնում, որովհետև նոքա պարկել էին պատի երկայնութեամբ ու հրացանների բերանները ուղղել էին դէպի գլխաւոր ճանապարհը:

Հէսց թշնամու երեալուն պէս՝ կարկտի պէս գնդակները թափւեցին նրանց գլխներին:

Այս հանգամանքը շփոթեցրեց նրանց ու կարգը խանգարելով սկսեցին իրար սեղմել ու շատերը ձորը թափւեցան, բայց նրանք չյուսահատւեցան, նրանք մի անգամ էլ սիրտ առան ու առաջ խաղացին, բայց այս անգամ հայ քաջերը աւելի կատաղի յարձակում գործեցին, մեծ մեծ քարեր նետելով այդ մեծ բարձրութիւնից՝ անագին վնասներ հասցրին թշնամուն: Նրանք յետ քաշւեցան ու սկսեցին զանազան ճանապարհներով շրջապատել հայ քաջերին:

Յարօն տեսնելով, որ թշնամու մի մասը անցաւ լեռան մի այլ նեղ ճանապարհով, որը տանում էր դէպի իւրեանց թիկունքը, էլ ժամանակ չկորցնելով ձայն տւեց Բաղօին:

— Բագօ, թոփր դէպի այդ ծմակը ու կըտ-
րիր թշնամու առաջը:

Բագօն առանց ժամանակ կորցնելու մի
քանի ընկերներով կայծակի արագութեամբ թը-
ռաւ դէպի այն կողմը ու կիրճի մօտ այնպիսի
յարձակում գործեց, որ Համիդիէք սոսկումով
յետ նահանջեցին և իրար հրելով դիակների կոյ-
տեր կազմեցին. մի մասն էլ զոհ գնաց Բագօյի
հզօր բազկին, իսկ միւս մասը՝ ամօթով յետ փա-
խան. Յարօն էլ իւր քաջերի հետ այնպիսի ա-
նօրինակելի քաջութիւն ցոյց տւեց, որ Տաճկաց
զօրքը սարսափահար եղած արդէն չըքուած էր,
այն աստիճան տրտունջ բարձրացաւ, որ էլ չէին
ուզում առաջ խաղալ:

Օրը մթնեց, լուսնի երեալուն պէս կոիւը
դադարեց: Լեռան լանջերի վրայ թշնամու դի-
ակները մնացին թափթփած, արիւնը հոսում էր
հեղեղի պէս: Թշնամու մնասը մեծ էր, հայերից
երեքն էին սպանւած, իսկ չորսը վիրաւորւած,
որոնց շուտով ինամք տրւեցաւ, իսկ մեռեալ
ընկերներին թաղեցին մէկ կաղնի ծառի տակ.
Քահանան կարդաց իւր վերջին աղօթքը, օրհնե-
ցին քաջերի գերեզմանը և ապա մէկ-մէկ մօ-
տեցան տիբութեամբ ծունկ իջան ու համբու-
րեցին նահատակների գերեզմանը:

Արդէն մութն էր. խարոյկի ծուխը բարձ-
րացաւ, սկսեցին կերակուր եփել:

Հայ քաջերը լաւ գիտենալով, որ տօնի
պատճառով թշնամին դադարեց, իւրաքանչիւրը
մտածում էր գիշերւայ հտնզստութեան համար:
Հայ քաջերի հոգու տրամադրութիւնը շատ լաւ
էր, խօսակցութիւն, ծիծաղ, երգ տարածւում
էր խաղաղ գիշերւայ ժամին: Նրանցից ամեն
մէկը պատմում էր իւր օրւայ հերոսութեանց
մասին, նրանք խաղաղ անցկացրին գիշերը, իսկ
միւս օրը լուսանալուն պէս դարձեալ մտածե-
ցին իւրեանց անելիքների մասին:

Նախքան կոիւ սկսելը. փաշան մարդ ու-
ղարկեց հայ քաջերի մօտ, պահանջելով, որ նը-
րանք զէնքերը վար դնեն ու օրինաւոր կառա-
վարութեան խոնարհւեն, դրա հետ խոստանում
էր, որ ոչ մի պատիժ չեն քաշիլ և խաղաղու-
թիւն կպահպանեն: Բայց Յարօն այս հնազան-
դութիւնը նսեմութիւն համարելով՝ բացէ ի բաց
մերժեց՝ ասելով.

Միթէ անհաւատներդ ազնիւ խօսք ու-
նէք, հնազանդւել ձեզ՝ նշանակումէ կնոջ գեր
կատարել, չէ՞ որ մենք ձեզ շատ խոնարհւեցինք,
փոխանակ արժանաւոր կերպով վարւելու մեզ
հետ, մեզ այս աւերման հասցըիք և ամեն սըր-
բութիւն ոտքի տակ տւիք, այս ամենը անելուց
յետոյ պահանջում էք, որ մենք դարձեալ ձեր
ամօթի լուծը տանենք խոնարհաբար: Ո՞չ, բա-
ւական է, որքան Ղուրանի չար որդիքը մեր

արիւնը խմեցին։ Գնա, առա, ձեր վայրահաչ
հրամանատարին, որ նրա հրամանը հայ քաջերի
վրայ չի տարածւում։ Մենք երդւել ենք մեռնել
և մեր արիւնով սրբել այն կեղաը, որ այսքան
դարերից ի վեր տարանք։ Գնա, և այդպէս ասա
ձեր հրամանատարին։

Ե՞ն, ողորմելիներ, ինչ սպառնալիքներ էք
ուղարկում, — ասաց արհամարհանքով պարլա-
մենտեօրը։

— Գնա, անամօթ գազան, թէ չէ... դեռ
խոսքը չվերջացրած, յարձակւեց ու իւր հզօր
մատների մէջ խեղդեց պարլամենտեօրին և ի
նախատինս փաղիշահի վայր բարձրացրեց նորա
դիակը ու ցած գլորեց վար։

Կէս օր էր, թուրքերի կողմից յարձակում
սկսւեց, համարեա ամեն կողմից հայ քաջերը
կատաղի վագրերի պէս կուռւմ էից թշնամու
հետ և լաւ հնձւորի պէս աջ ու ձախ էին փր-
ռում թշնամու շարքերը։ Յարօյի կինը մի
խումբ զինւորների հետ կուի բռնւելով անթիւ
վէրքեր ստացաւ ու այնպէս անշնչացած գե-
տին ընկաւ, տապալելով իւր հետ տասնեակ
զինւորներ։

Իրար յետեից ընկան և միւս քաջերը, իսկ
կանանցից մինը Զմրութը՝ տեսնելով, որ այլնս
անհնարին է սուր շարժել և որպէս զի գերի
չընկնի թշնամու ձեռքը, երեխան գրկած թռաւ

լեռան գագաթից ձորը՝ իրան հետ քաշ տալով
երկու տաճիկ զինւոր, որ այդ ժամանակ բռնել
էին նրա վիեշից։

Գիշեր էր արդէն, մի փոքր հեռու բանա-
կատեղից՝ թիկերի մէջ ընկած էր Բաղօն վիրա-
ւորւած։ Պայծառ լուսինը լուսաւորում էր այն
անտառային դաշտակը, որտեղ նա պառկած էր։
Անցաւ մի քանի ըստէ, նա չկարողացաւ յիշել,
թէ հրտեղ է, ինչու է պառկած և ինչ էր կա-
տարւում իւր հետ, բայց սաստիկ ցաւ էր զգում
նա գլխին, վերջապէս յիշեց բոլոր պատահար-
ները։

Ոչ հեռու, անտառի յետեր, նա լսեց կուի
յուսահատ ձայներ, հրացանաձգութիւն, կռւող-
ների աղաղակ, վիրաւորւածների հառաչանք,
ձիաների արոփ, այդ բոլորը խառնւում էր և
ինչ որ մէկ սարսափ ցնցում էր նրա սիրտը։
Զաւեշտ էր։

— Բաղօ, դու ես այս, — լսելի եղաւ նրա
մօտ մի ինչ որ ձայն, նա իմացաւ այդ ձայնը,
ճանաչեց որ իր սիրելի Մարգարիտն էր։

— Փառք Բարձրեալին, որ գոնէ քեզ յա-
ջողւեց այստեղ գուրս գալ, այստեղ կատարեալ
սպանդանոց է, — ասաց ալեկոծւած ձայնով
Մարգարիտը։ Զօրքը ամեն կողմից շրջապատեց
և կոտորեց, կարծեմ մինչ վերջին մարդը։

— Ո՞հ անիծեալ, գարելի ազգ։



Института
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

—Բայց ի՞նչ է պատահել քեզ, ինչու ես այդպէս գունատ. ոհ, Աստւած իմ, դու ամբողջովին արեան մէջ ես, դու վիրաւորւած ես, բացականչեց Մարգարիտը դողդոջուն ձայնով, մթութեան մէջ չնկատելով երեսի արիւնը:

—Այս, գլխիս է, —թոյլ ձայնով ասաց Բաղօն: Մարգարիտը նայեց իւր ամուսնու վէրքը:

—Հարկաւոր է կապել, բայց ի՞նչով, —նա քանդեց իւր մէջքին կապած թաշկինակը ու կտոր կտոր անելով՝ կապեց գլխի վէրքը: Յանկարծ լսելի եղաւ նրանցից ոչ հեռու ձիերի տրոփը և մի քանի ըոպէից յետոյ երեացին Համբիգիները. Բաղօն չկորցնելով իր հոգու զօրութիւնը, ոտքի կանգնեց ու բարձրածայն սկսեց գոռալ:

—Տղերք, կոտորեցէք այդ անօրէններին— ասաց ու վայր ընկաւ սաստիկ թուլութիւնից: Համբիգիները կանգ առան. նոքա չէին մտածում, թէ այդտեղ հայ քաջերը դարան մտած կ'լինին:

Մարսափը տիրեց նրանց, նոքա վախից այս ու այն կողմ սկսան վախչել, բայց այդ ժամուն նորից լսեց մօտալուտ մարդկանց ձայներ. Բաղօն ուզում էր տեղից բարձրանալ, բայց անկարող եղաւ, այրում էր նրա վէրքը, ծարաւը տանջում էր նրան, բայց նրա հոգին առաջւայ պէս քաջ էր և հէնց տանջանքը օդ-

նում էր նրան: Մարգարիտը տեսնելով, որ Համբիգիները մօտ են և կարող են նկատել, Բաղօն բարձրացը իւր մէջքին ու մացառների միջով սկսեց շտապել՝ ու մագլցելով մի ձեռքով, իսկ միւսով ամուր պահել էր իւր ամուսնուն. բայց լուսնի պարզ ճառագայթները այս անգամ նրանց մատնեցին: Համբիգիէք տեսնելով նրանց փախուստը, շտապեցին առաջները կտրել:

Մարգարիտը մի փոքր իջեցը մէջքից վիրաւորին և սկսեց կապել իւր վէրքերը, որոնցից արիւնը հոսում էր. բայց նկատելով որ թշնամին հեռու չէ իրանցից, վեր թռաւ տեղից, Բաղօն նոյնպէս թէն ցնցւեց, բայց ընկաւ ու աւանդեց հոգին, իսկ Մարգարիտը մագերը քրքրած, փէշերը ամրացը գոտկատեղում, առաւ ատրճանակը ու պատնէշ անելով ամուսնուն, չոքեց գետնին մի ոտով և ատրճանակը ուղեց մի տաճիկ սպայի կուրծքը, որը և ընկաւ ընկան մի քանիսը, իսկ ինքն էլ մահացու վէրք ստանալով՝ կնքեց իւր մահկանացուն:

Այսպէս ընկան հայ քաջերը իւրեանց հայրենիքի պատւի համար, նոքա պատերազմեցին հերոսաբար ու ընկան հերոսաբար: Իրանց ընկած տեղը անւանւեց «Հայ եղբայրական գերեզման»: Ապագայում, երբ կլինի «Երջանիկ Հայաստան», դրանց վրայ կբարձրանայ պատւի

կոթող և ամեն մի անցորդ կօրհնի հերուների գերեզմանը իշրկ վսեմ գործի նահատակներ, իսկ կըթքի ու կանիծի անամօթ ու գիշատիչ բռնաւորին, որ իւր սկ ու խայտառակ դրօշակը կանգնեց սրբազան գործի նահատակների վրայ, որոնք չը վախեցան ոչ նրա բազմաթիւ հրոսակներից, ոչ նրա կործանիչ թնդանօթների ոռոմքերից:

Չ Ե Ր Ձ

БИБЛИОТЕКА
Института
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՀՀ Ազգային գրադարան



NL0357945

57.344

30709

Ա. Տ. Օ. Մ.

Գյուղները թող դիմեն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ
Ակադեմիա Խոր
ՍСՀԲ

Елизаветполь

Книжный магазинъ С. Жамгарянъ.

891. 99

Վ-30